ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/0 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Պատգամավորներ՝ Ալեն Սիմոնյան,** **Ալխաս Ղազարյան** **ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի հոդված 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով: Հոդված 1. 1. Օրենքի վերնագիրը և ընդհանուր շարադասությունը համապատասխանեցնել Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի պահանջներին հետևյալ կերպ՝«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. 2.Նոր լրացվող 1.1 մասում «համայնքի» բառը փոխարինել՝	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			«համայնքների» բառով, «յուրաքանչյուր» բառից հետո լրացնել «բնակավայրի» բառով: Լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. **«**Բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման առանձնահատկությունները և կարգը հաստատում է Կառավարությունը**»**		
2.	**Պատգամավորներ՝ Ալեն Սիմոնյան,** **Ալխաս Ղազարյան** **ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի հոդված 2.	Լրացնել 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝« 2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող մասով նախատեսված առանձնահատկությունները և կարգը Կառավարությունը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»**:**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	**Պատգամավորներ՝ Ալեն Սիմոնյան,** **Ալխաս Ղազարյան** **ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը լրացնել նոր նախագծով՝ Հայաստանի	Հայաստանի Հանրապետության Օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին	Հոդված 1.«Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 2.1-ին կետով. «2.1) իրականացնում է «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասից բխող գործառույթները: Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:		
4	**Պատգամավորներ՝ Ալեն Սիմոնյան,** **Ալխաս Ղազարյան** **ՀՀ կառավարություն**	Նախագծերի հիմնավորում	Նախագծերի հիմնավորումը փոփոխվել է, ըստ օրենքի նախագծերի ներկայացված փոփոխությունների:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**